Երթական «նշանակալից» հանդիպումը

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը ադրբեջանցի իր պաշտոնակից Էլմար Մամեդյարովի հետ կարեւոր իրադարձություն է: Այդ հանդիպումն ինքնին նշանակալից է թեկուզ այն հանգամանքով, որ դրան առաջին անգամ մասնակցում է Հայաստանի նորակազմ համարվող կառավարության նորանշանակ արտգործնախարարը: Հեւականորեն սա կարող է նշանակել, որ երկար ընդմիջումից հետո հակամարտող կողմերի արտգործնախարարների միջեւ վերջապես տեղի ունեցած կենդանի շփման ժամանակ կարող են վեր հանվել ու քննարկվել թարմ գաղափարներ եւ մոտեցումներ: Գոնե Արեւմուտքում հենց այդպես է ընկալվում որեւէ երկրի արտգործնախարարի փոփոխությունը: Հանգամանք, ինչը, եւրոպական տրամաբանությամբ, պետք է նշանավորի արտաքին քաղաքական մոտեցումների որոշակի փոփոխություններ: Այդ ամենով հանդերձ, ստիպված ենք արձանագրել, որ Նալբանդյանի եւ Մամեդյարովի միջեւ կայացած ստրասբուրգյան հանդիպման կարեւորությունը միանգամայն թվացյալ է, եւ այն, առանց դույզն-ինչ տատանվելու, կարելի է դասել Օսկանյան-Մամեդյարով ձեւաչափով նախկինում կայացած տասնյակ անպտուղ հանդիպումների շարքը:

Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ Հայաստանի արտաքին գերատեսչության մի ղեկավարի փոխարինումը մյուսով, տվյալ պարագայում, արտաքին քաղաքականության ինչ-ինչ վերանայումների արդյունք չէ, այլ ընդամենը պարզ՝ մեխանիկական գործողություն: Նախարար Օսկանյանի փոխարինումը նախարար Նալբանդյանով դարաբաղյան հակամարտության համատեքստում նույն արժեքն ունի, ինչ նախագահ Քոչարյանի փոխարինումը նախագահ Սարգսյանով: Այն, որ ընդհանրապես Հայաստանի արտաքին ուղեգծի պահպանման եւ, մասնավորապես, դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցերում ՀՀ նոր իշխանությունները հարազատ են մնալու նախկին նախագահի սկզբունքներին, մեկ անգամ չէ, որ հնչեցվել է Սերժ Սարգսյանի կողմից: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա մեծ համոզվածությամբ կարելի է պնդել, որ Ադրբեջանի «դարաբաղյան» վարքագիծը եւս որեւէ փոփոխության չի ենթարկվի առնվազն առաջիկա տասնամյակի ընթացքում, թեկուզեւ այդ ժամանակահատվածում տասը արտգործնախարար փոխվի:

Հետեւաբար, Լեռնային Դարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման ոլորտում առաջիկայում սպասվող հաջորդ «կարեւոր իրադարձության» դերին, լավագույն դեպքում, կարող է հավակնել նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի միջեւ կայանալիք հանդիպումը: Այդ իրադարձության նշանակալից լինելը, սակայն, ինչպես եւ վերը բերված դեպքում, կսկսվի ու կավարտվի ընդամենը դրա մասնակիցների կազմի պարզ փոփոխության հանգամանքով: Նման հանդիպման հնարավորության մասին, ի դեպ, Ստրասբուրգում էդ. Նալբանդյանի հետ ունեցած զրույցից հետո լրագրողներին ասել է Է. Մամեդյարովը: Նա, մասնավորապես, նշել է, թե իրենց քննարկած տարբերակներից մեկով Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի առաջին հանդիպումը կարող է կայանալ ընթացիկ տարվա հունիսին Սանկտ- Պետերբուրգում անցկացվելիք տնտեսական համաժողովի օրերին:

Ա. ՎԻՐԱԲՅԱՆ